ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

<<27.11.2024թ>> Պռոշյան բնակավայր

Սույն թվականի նոյեմբերի 27-ին, ժամը 11:00-ին ՀՀ Կոտայքի մարզ Նաիրի համայնք, Պռոշյան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում (հասցե՝ Պռոշյան գյուղ, Անդրանիկի փող. 11 շենք) տեղի ունեցավ <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի /03.05.2024թ. ՀՕ-150-Ն/ և ՀՀ կառավարության 2023թ դեկտեմբերի 28-ի <<Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին>> N 2343-Ն որոշմամբ սահմանված կարգի (առաջին փուլ) Լ. Օհանյանի կողմից ՀՀ Կոտայքի մարզ Նաիրի համայնք, Պռոշյան բնակավայրի Գ. Չաուշի խճուղի 1/21 և ՀՀ Կոտայքի մարզ Նաիրի համայնք, Պռոշյան բնակավայր հասցեներում բազմաբնակարան բնակելի համալիր կառուցելու նախատեսվող գործունեության վերաբերյալ («Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ կետի 8-րդ ենթակետ) առաջին հանրային լսումը:

Ելույթ ունեցան՝

Յ. Ռզգոյան

Ներկայացրեց, որ սույն թվականի նոյեմբերի 27-ին, ժամը 11:00-ին ՀՀ Կոտայքի մարզ Նաիրի համայնք, Պռոշյան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի է ունենում ՀՀ Կոտայքի մարզ Նաիրի համայնք, Պռոշյան բնակավայրի Գ. Չաուշի խճուղի 1/21 և ՀՀ Կոտայքի մարզ Նաիրի համայնք, Պռոշյան բնակավայր հասցեներում բազմաբնակարան բնակելի համալիր կառուցելու նախատեսվող գործունեության վերաբերյալ հանրային քննարկումներ:

Ք. Դեմիրչյան

Ներկայացրեց նախատեսվող գործունեությունը և աշխատանքային նախագիծը: Նշեց նախատեսվող գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշները, տեխնիկա-տեխնոլոգիական լուծումները

Ա. Գալոյան

Ներկայացրեց Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը: Նշեց, որ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակվել է համապատասխան Շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության մասին օրենքի պահանջների համաձայն:

Ներկայացրեց նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում հնարավոր բացասական և դրական ազդեցությունները շրջակա միջավայրի վրա՝ մասնավորապես փոշու, ածխածնի օքսիդի և ազոտի երկօքսիդի առաջացման աղբյուրները և այդ ազդեցությունները մեղմացնող միջոցառումները:

Նշեց որ ՇՄԱԳ հաշվետվությամբ նախատեսվել են համապատասխան բնապահպանական մեղմացուցիչ միջոցառումներ:

Հանրային քննարկումների ընթացքում տեղի ունեցավ նաև մտթերի փոխանակում, բարձրացվեցին հարցեր շինաշխատանքների կազմակերպման, տարածքի մոտեցումների, տարածքում հնարավոր ծառահատումների, ինսոլյացայի հաշվարկի, շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների, նախատեսվող բնապահպանակա միջոցառումների,

ավտոկայանատեղիի վերաբերյալ և այլն, որոնց վերաբերյալ կողմերը տվեցին սպառիչ պատասխաններ:

Պոռշյան բնակավայրի վարչական ղեկավար՝ Ս. Գաբրիելյան

Զեռնարկողի ներկայացուցիչ՝ Ք. Դեմիրչյան